



## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՂ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

### Ժամանում Փարիզ

Հունվարի 30-ին, շաբաթ, գիշերվա ժամը 9.35-ին, Փարիզ էր ժամանում Ամենայն Հայոց Կեհափառ Հայրապետը իր շքախմբով:

Ֆրանսահայությունը երրորդ անգամ էր, որ ուրախությունն ու բախտավորությունն էր ունենում վայելելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորելու համար օդանավակայան էին եկել Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ Տ. Սերովը արքեպիսկոպոս Մանուկյանը, Տ. Գյուտ և Տ. Արքի վարդապետները, Տ. Վագգեն, Տ. Լևոն, Տ. Տարոն արքեղաները, քահանա հայրեր, կրոնական ընկերության վարչության անդամներ, Ա. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցու հոգարարձությունը, Փարիզի արքարձանների եկեղեցիների ներկայացուցիչներ, «Հառաջ», «Աշխարհ», «Բյուրակն», «Խթան» թերթերի թղթակիցներ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունելու էին եկել նաև Սամվել-Մուրադյան վարժարանի Մխիթարյան հայրեր, դասախոսական կազմը՝ պրոֆ. Ֆեյդիի գլուխավորությամբ, ուսանողությունը և ֆրան-

սահայ բազմաթիվ միությունների ներկայացուցիչներ:

Նորին Ա. Օծության դիմավորելու էին եկել նաև, հանուն իտալահայ համայնքի, Երվանդ Հյուսիսյանը և Ստեփան Մրապյանը, հանուն անգիւայի հայ գաղութի՝ Սարգիս Քյուրենյանը, Բեյրութից «Նախրի» շաբաթաթերթի խրմբագիր Ա. Մառովյանը և ուրիշներ:

Հանուն ֆրանսահայության, Նորին Ա. Օծության շնորհաբեր գալուստը ողջունում է Տ. Սերովը արքեպիսկոպոսը:

Հանուն փարիզահայ ուսանողության, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Փարիզ ժամանումը ողջունում է երիտասարդ ուսանող դրկան. Զ. Մկրյանը, որը հրավիրեց նաև նրան այցելել համալսարանական ուստանի Հայկական տունը, հայրապետական իր օրնությունը տալու հայ ուսանողներին:

Կեհափառ Հայրապետը իր խորունկ գործնակությունն ու ուրախությունն է հայտնում չերմ և սիրալիր դիմավորության համար և աշահամբույրից հետո, Փարիզի ոստիկանության կողմից տրամադրված հեծելանվորդների պատվո ջոկատի և բազմաթիվ ինքնաշարժների ուղեկցությամբ, հանդիսավորապես առաջնորդվում է Փարիզի Հայոց Ա. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, ուր մուտք է գործում եկեղեցական թափորով, «Հրաշափառ»-ով և



Վեհափառ Հայրապետը Փարիսի Հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Եկեղեցում

ողջունելով հայ բազմությանը, տալիս է հայրապետական իր օրհնությունն ու պատգամը։ Եկեղեցում, արարողության ավարտին և աշահամբույրից հետո, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Կոնկորդի հրապարակի Կրիյոն հյուրանոցը, ուր նորին Ս. Օծության հատկացվում է առանձին և շքեղ հարկաբաժին։

**Հայրապետական պատարագ և քարոզ Փարիսի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Եկեղեցում**

Հունվարի 31-ին, կիրակի, օրը անձրեացին և ցուրտ է։ Հակառակ եղանակի աննպաստ պայմաններին, Փարիսի Հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Եկեղեցին լիքն է հավատավոր, երկրորդած բազմությամբ։ «Շատեր դուրսը մնացած ցուրտին և խոնալության մեջ կսպասեն, հեռվեն գեթ լսելու համար բառերն ու խոսքերը Ամենայն Հայոց Կաթողիկոսին» («Յուրակն», Գետրվար 7)։

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։ Ս. Սեղանին սպասար-

կում են Տ. Սերովիք և Տ. Կոմիտաս Մրագանները, Տ. Արսեն, Տ. Արիս վարդապետները, Տ. Վազգեն, Տ. Լոնի, Տ. Տարոն արելաները, Բահանա հայրեր։

Սուրբ պատարագի եկմալյան և Կոմիտասյան երգեցողությունը կատարում էր միացյալ երգախումբը՝ երաժշտագիտ Արա Պարեյանի շնորհալի ղեկավարությամբ։ Եկեղեցու աշակողմյան և ձախակողմյան դասերում տեղ նն գրավել պաշտոնական հրավիրյալներ, Փարիզի հայ կաթոլիկ համայնքի պետ գերապայծառ Տ. Կարապետ Ամառունին, Միմիքարյան հայրեր, Վերապատվելի Միսանը, Ալֆորվիլի երեսփոխան բաղաբագուխ Ռատու Բիլովը, Փարիզի արվարձանների, Մարսելի, Լիոնի, Վալլանսի եկեղեցական վարչությունների և հոգաբարձությունների ներկայացուցիչներ ու հոծ բազմություն։ «Հայր մերը-ի ժամանակ քարոզում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

«Փառք Ամենակալին, մեր Աստուծուն, որ ան Մենք, Մեր նանապարհին ղեպի Մայր Արք Ս. Եջմիածին, վերստին կիանդիպինք ձեզի, սիրելի՝ հավատացյալ զավակ-

մեր Մեր: Այս սուրբ պատարագի պահը ապացը է Մեզի համար, ամենու համար, որ պիկրաված ենք Հայաստանյաց եկեղեցին սուրբ պատառքներուն մեջ և միշտ ապրած մենք մեր հայրերուն հավատքը մեր սրբերուն մեջ ամուս պահած:

Աղոքքները, որ կարտասանվին, այս երաները, որ կհնչեն մեր եկեղեցփոյն համար սրբերուն ներեւ, իրաք որ բաղցր են, և հոգեարձ, և հոգեպարար: Կերպարանափոխմանինքներ կարծես հոգեպես, քարոյապես, նույնակ շափով մը մարմնապես: Վերացումի, սկապես հոգեար վերացումի պահեր են, որ արագինքներ: Եվ մենք կիութինք, թե այս կերպով կրտնանք ավելի մարդ, ավելի համապատասխան այն գաղափարին, որ Մենք մշակնանք մարդ բանով, իր բովանդակ, իր ուոր և իր գեղեցկագոյն իմաստով անտարագոյնս: Այն, ինչ որ կրեարոշ զմեզ իրեւ մարդ, մեր ֆիզիկական գոյությունը չէ, այլ այսն, ինչ որ կոչունք մենք հոգի: Դուքն մենք մենք կրեար բանաձեռք, ինչպես գիտուրյան մեջ ուրեմն ճյուրական կամ ֆիզիկական գոյություն արտահայտող բանաձեռք, սակայն մեր մտնողիները կվկայեն, և մենք կզգանք եշմարտապես, որ մենք շատ ավելին ենք, քան եյուրական գոյություն մը այս աշխարհին վրա:

Տիեզերքի մեջ ենր մակարդակ մը կերտած մենք իրեւ մարդ: Եվ այդ մակարդակին, այդ մենցեկան մակարդակին վրա, մենք կզամենանք մեալ հաստատուն ու առավել բարձրական: Այդ կիամարենք մենք կոչումը մարդուն այս աշխարհին վրա: Եվ այդ վսեմ քրոիչքը մեր հոգիները կառնեն մասնավանդ նմեր սուրբ հավատքի գորությամբ և չերմուգրյամբ: Եվ մեր սուրբ տաճարները այն վայրերն են, որ մենք առավել ոգեշնչված, կկարողանանք բարձրանալ դեպի այդ պայծառ մորիկները հոգեկան:

Փա՛ռ Աստուծուն, որ մենք, իրեւ ժողովուրդ, թե համրամենդ փառ և շատ-շատ անզամ տառապած և համատակված մեր հավատքին համար, այնուամենային կարդացեր ենք մեալ մարդկային այդ լուսավոր մակարդակի վրա, կարուցացեր ենք կանգնեն պահել և հաստատուն մեր Առաքելական Ս. Եկեղեցին, կարուցացեր ենք իրեւ ժողովուրդը մեր հոգեար և մշակուրային արժեքներուն հպատ մը բերել մարդկության գանձանակին մեջ, որ կիազմե ոգեկան արժեքներու ամրագուրյունը մարդկային կյանքի պատմության:

Սիրելի՝ ժողովուրդ, Մենք մասնավոր կերպով տպակորպեցանք այսօրվան մեր սուրբ պատարագնեն, երգեցողություններն և ձեր ներկայութենեն և կզանք իսկապես ինչպես:

կրսենք, կզգանք, որ իրաք հոգեկան ուժ մը կա, որ մեզ կմիացնե և կրածրացնե: Ուրախ, այնշափ ուրախ ենք իրեւ Հայոց Հայրապետ, որ հաղաքակրության կեղրան և լույսի այս մեծ հաղաքին մեջ, եվրոպայի սրբին վրա, մենք ալ լույսի կեղրան մը ունինք, որ մեր այս Ս. Եկեղեցին է, հայկական ոնուկ կառուցված:

Մենք մասնավոր գնահատանքի խոսք կուղենք ուղղել մեր սիրելի եղբարը՝ Մ Ե Ր Ո Վ Ր Ե Ա Ր Ւ Ե Վ Պ Ա Կ Ո Ս Ի Ա Բ Ե և հոգեար ամբողջ դասուն և այս եկեղեցփո հոգաբարձության և բոլոր մյուս մարմիններուն, որոնք առավել կամ նվազ շափով, իրենց հեարագության սահմաններուն մեջ, կնպաստեն եկեղեցփո պայծառության:

Մասնավոր գնահատանքի խոսք ունինք նաև երգախումբին, որուն զլուխը կզանքի վաստակավոր արվեստագետ պր. Պ Ա Ր Ե Ր Ե Յ Ա Ն, և զիտենք, այնքան մեծ ջանապիրությամբ և հանաւ ամեն դժվարություններ հաղթահարելով, բաղցր կերպով և ուժգին կերպով կինչեցնե հայ պատարագի սուրբ երգը այս կամարեներուն ներեւ: Մեր օրինություններ իրեն և երգախումբին բոլոր անդամներուն և մեներգիչներուն: Անշուշ մեր պատարագը առավել կգերեցկանա և առավել կրափանց մեր հոգիներեն ներս, եթե երածտությունը բլլա բարձր մակարդակի վրա: Եվ կիութինք, թե դուք մասնավեն, սիրելի՝ հավատացյալներ, որ կգտնվիք այս լույս հաղաքին մեջ, հախանձախներություններ պետք է ունենաք և ունինք ալ արդեն, որ մեր հոգեար երածտությունը իր ամրող գեղեցկությամբ և պայծառությամբ հաղթական նիշն այս կամարեներուն տակ:

Սիրելի՝ ժողովուրդ, բայց Մենք չենք կրեար մոռնալ վերստին ձեզի ողջուն բերելու Մայր Արքու Ս. Էջմիածնեն:

Մենք, իրեւ Հայոց Հայրապետ, գուցե Մեր խոսեներուն ընթացքին չունինք ավելի բաղցր պահ հան այն պահը, երբ այս ողջունը և այս օրինություններ կրաշխենք մեր հավատացյալ, մեր հարազատ հայ ժողովուրդին: Հայ ժողովուրդի պատմության դժբախտ պարագաները ստեղծեր են մեր Սիրութքը: Սիրութք ունենալ ինքնին ողբերգություն մըն է ժողովուրդի մը համար, որեւ ժողովուրդի համար, մասնավանդ փոքրարիկ ժողովուրդներու համար, ինչպես մենք: Սակայն մենք ի վիճակի չենք մեր այս հակատագիր փոխելու, գոնե անմիջապես: Պետք է ընդունինք իրողությունը այնպիսի, ինչպես կա և աշխարհին միացյալ ուժերալ և նիգերով այս ողբերգությունը վերածելու գուցե և հաղթահարի, որովհետեւ հավատք ունինք մեր ժողովուրդի հոգեկան

և իմացական ուժերուն վրա և անոր հայրենասիրության վրա: Կխորհինք, թե անհնարքան չէ, որ հայ ծողովաւրդպ Սփյուտի մեջ ցրված ըլլաշու պայմանը վերածե հաջողություններու և հայրանակներու: Մենք, Եղարքն սկսյալ, Սփյուտի սկսած ենք ունենալ: Վարդանանց պատերազմեն հետո, ինչպես պատմիչները կրսեն, առաջին գաղթականությունը ունեցած ենք դեպի Թյուգանդինի արևմտյան կողմերը և դեպի այսօրվան Թալիանյան երկրները: Հայտնի է, որ մինչև Դանորի ափերը հասած են հայ գաղթականներ և զինվորականներ: Եվ հաճախ մեր գաղթությունը ընթացքին փառավոր հայկական կյանք ապրած են և նույնիսկ կյանքի ներարկում կատարած են բուն Մայր Հայրենիքի վրա երբեմն: Անա այսպիսով, հայ ծողովաւրդպ պատմական մեծ փարձառություն մը ունի Սփյուտի ունենալու և այնուամենային տոկար և ապրելու, և Սփյուտի պայմանները հաղորդության վերածելու:

Թագմարիկ անգամներ պատմության մեջ մենք ունեցած ենք ազգային վերածննդյան կերպներ: Մայր Հայաստանի սահմաններն ունիւր:

Այսօր բացառիկ նոր պայմաններու մեջ կդունվինք իրեւ ծողովաւրդ և իրեւ եկեղեցի և այդ պայմանները բավարար շափով մը նպաստվոր են, նոգեստ և ազգային իմաստով, և հետեւարար Սփյուտի, մեզի համար հեռու ողբերգություն և հուսահատություն րլալե, մեր օրերուն կրեան դառնալ հայ կյանքի լուսավոր երեսներն մեկը, ամբողջազուցիցն ու լրացնություն այն հայկական կյանքին, այն ազգային վերածննդյան, այն իրականության, որ կանի և կծաղկի, կուտեանա և հետզետես կզորանա մեր Մայր Հայերենիքի սահմաններն ենք: Ամբողջ հայ ծողովաւրդը այս զգացումով, կխորհինք, թե կիրենի և կմիթքարվի, կենդանության նոր ուժեր կարենցնե իր մեջ, որպեսզի մենք սփյուտի պայմաններուն մեջ շկռավինք, յակարանան և կարողանանք մեր կյանքի, մեր իղձերու և մեր ապագայի նկատմամբ ունեցած տեսիլքներու միությունը պահպանելու: Մայր Արքուն Ա. էջմիածինը իր սուրբ առաքելություններն մեկը կնկատե, իր ողջունի և օրինության խոսքի հետ միատեղ, այդ պատգամը բերել մեր պահպանություններուն:

Կոչ կողղենք Ֆրանսայի Մեր զավակներուն, որպեսզի մեկ սիրու, մեկ հոգի, մոռցած ամեն բան, աղօթի և ուխտի միությունը իրականացնեն: Եվ Տերը բող առաջնորդ ըլլա ձեզի այս լուսավոր համրուն վրա»:

Ժամը 2-ին, «Կրիյլն» հյուրանոցում, Նորին Ս. Օծության պատվին տրվում է բարի

գալստյան ճաշկերույթ, որին ներկա են լինում մասնավոր հրավիրայաններ, շուրջ 30 հոգի: Ընդունելության ժամանակ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնաբեր գալուստը չերմ ելույթներով և հարգալիք արտահայտություններով՝ ողջունում են Տ. Սերովիք արքեպիսկոպոսը, ազգային վարչության անդամ Ս. Քարյանը, Միլանուից Յ. Հյուսիսյանը, Վալանսի եկեղեցու հոգաքարձության անունից Մուշեղ Ճիրանյանը և «Նաիրի» շաբաթերթի խմբագիր Ա. Մառուկյանը:

Վերջում գոհունակության և օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը, մի անգամ ևս ողջունելով Արևմտյան եվրոպայի և ֆրանսահայության ներկայացուցիչներին, բաշխելով բոլորին Մայր Աթոռ Ս. էջմիածնի կենարար օրհնությունն ու լուսուր:

Երեկոյան ժամը 8-ին, հյուրանոցի իր հարկարածնում, Վեհափառ Հայրապետը մասնավոր տեսակցություն է ունենում Տ. Սերովիք արքեպիսկոպոսի, Յ. Հյուսիսյանի, Ս. Քյուրէնյանի և Ա. Մառուկյանի հետ:

#### Վեհափառ Հայրապետը այցելում է

Սկզի Միխթարյան հայրենի  
Սամվել Մուրադյան վարժարանը

Փետրվարի 1-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 10-ից մինչև 1-ը, Վեհափառ Հայրապետը, Փարիզի Հայոց առաջնորդարանում, բարեհաճում է ընդունել մի շարք պաշտոնական պատվիրակությունների և անհատների այցելություններ: Ավելի ուշ, Վեհափառ Հայրապետը ընդունեց «Լա Կրուա» («La Croix») թերթի թղթակցին:

Ժամը 4-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Տ. Սերովիք արքեպիսկոպոսի, շքախմբի անդամներով այցելում է Սկզի Միխթարյան վարժարանը, ուր դիմավորվում է շերմորեն գերապայծառ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Ամատունու, վարժարանի տնօրին Հ. Նիկողոս վարդապետ Քեհյանի, պրոֆ. Ֆեյդիի գլխավորությամբ ուսուցչական կազմի, աշակերտության և ծնողների կողմից և առաջնորդվում է վարժարանի դավիթի Պարոցական երգչախոսմբը, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, փայլուն հաշողությամբ կատարում է հայրապետական մաղթերգը՝ «Ամեն Հայի սրտից բխած»:

Հանուն աշակերտության, առաջին կուրսի ուսանող Ժիրայր Քյուրէնյանն ընթերցում է հետևյալ շերմ ուղերձը՝ ծոնված Վեհափառ Հայրապետին:

«Վեհափառ և Տեր,

Մուլրադյան վարժարանի աշակերտներս միացած, Զեղ կողջունենք որդիական գորովալիիր և անկեղծ զգացումներով։ Խորապես ազգակած ենք ու շնորհակալ, որ հայրենիք վերադարձի ճամբուն վրա, այսօր կատավեք մեղ Զեր ներկայությամբու։ Հայ տղու մեր արժանապատփությունը չէր կարող երեակայակել ավելի լավ վարձատրություն։ բոլոր հայերուն Հայրը էջմիածնեն մեղի է եկած։

Քիչ ենք Զեղ լսելու ու ծափողջունելու համար՝ սակավաթիվ։ Մեղի նման հազարներով հայ տղաք կան Ֆրանսայի բոլոր անկյուններուն մեջ ցրված, որոնք վստահորեն պիտի ուզեկին այսօր հոս, մեր մեջ ըլլալ և Զեղմով ողջունել էջմիածինն ու հայրենիքը։ Ամբողջ ֆրանսահայության մեջ, միայն մեղի վիճակվեցավ հայ վարժարանի մը աշակերտելու, այսօր հոս գտնվելու բախտը. բայց Դուք մեր խոսքը ընդունեցեք իբրև թարգման ֆրանսահայ բոլոր աշակերտներու զգացումներուն։

Պանդուխտ ծնանք և մեր հայրենիքը շտեսանք, բայց դեռ մանուկ, զայն երեակայեցինք ու սիրեցինք։ Մենք, բախտավորներս, շնորհիվ Մխիթարյան վարդապետներու ողիին ու աշխատանքին, սորվեցանք հայերեն լեզու, աղքային պատմություն ու գրականություն։ Մեղի կմիանան նաև հազարավոր այն տղաքը, որոնք ստիպված են օտար վարժարաններու մեջ տևարար օտար լեզվով արտահայտվել, որոնց մեծ մասը ակամադրախտությունը ունի հայերեն իսկ շկարենալ խոսելու, և կըսենք Զեղի, ճակատաբաց, թե հայ կմնանք, թե մեր հոգիներեն ո՛չ մեկ ձեռք, որքան ալ վայրագ ըլլա ու բարրարոս, չի կրնար զնչել Վարդանն ու Ղեղոնդ երեցը, կրոնիք ու հայրենիքի զույգ սրբությունները։ Լույսի կեդրոն հոչակված այս քաղաքին մեջ կմնանք հապատ մեր դարավոր մշակութով, որ մշակութն է ու քաղաքակրթությունը նաև մեր եկեղեցին, կմնանք հապարտ մեր ազգային հերոսներով, որոնք մարտիրոսական կարմիր պսակը կկազմեն նաև մեր եկեղեցին։

Խանդավառությամբ կողջունենք հայրենիքը մեջ մեղի տարեկից մեր եղբայրները։ Ըսեք իրենց, թե թեև հազարավոր մղոններով հեռու, բայց Մխիթարի հարկին տակ թրծված, կմնանք իրենց պես հայ, ազգային նույն ցավերով ու հուսերով ապրող, մեր ներկային հանդեպ իրենց շափ գիտակից և իրենց պես խանդավառ վաղվան մեր հրաշալի հարությամբ։

Վեհափառ Տեր, օրհնեցե՛ք մեզ և աղոթեցե՛ք մեղի համար, որ մեր այս հավատքին մեջ միշտ ամուր իրականակային մեր

հայրերուն հույսերը և մենք հասակ նետեինք էջմիածնին ու Երեանի շուրջ խմբված։ Այնուհետև, Սամվել Մուլրադյան վարժարանի տնօրին վարդապետը ընթերցում է հետևյալ գեղեցիկ ուղերձը՝ հանուն դասախոսական կազմի։

«Կեհափառ Տեր,

Անհուն հրճավանքով և հուզումով զեղուն սրտերով, շրջապատած ենք զԶեղ, արժանավոր Գահակալը էջմիածնի Մայր Աթոռին, որ դարերու շրջանին կուրծք տված է ամենի դժվարություններու և վերիվայրումներու, և իբրև փարոս մը անշեշ, վառած կուսավորչի Աջող, առինքնած է միշտ նայվածքը հայ ժողովորդին, տարցուցած է սիրտը, միտքը և հոգին, և անոր հավատքով տոկացած է բոլոր հալածանքներուն, և քալած ու քալած է պատմության մեջեն, մինչև որ այսօր կերտած է, Տրդատյան Տաճարի հովանիքն ներքեւ, հայրենիք մը լուսավոր, լուսաշող, հյուրընկալ։

Տասնյակ մը տարիների ի վեր, Գահակալն եք Ս. Գրիգոր կուսավորչի Աթոռի Հարգանք և հիացում միայն ունինք, Վեհափառ Տեր, Զեր անձին հանդեպ, ինչպես նաև բոլոր այն եկեղեցականներուն, որոնք կշանան վառպահել հավատքը Ս. Գրիգոր կուսավորչի։

Մենք, Մխիթարի զավակներս, ոչ միայն պատված կզգանք ինքզինքնիս Զեր ներկայությամբ, այլ նաև քաջալերված, և մեղի հետ նաև ներկա դաստիարակները, ծնողները և աշակերտները։

Կինդրենք Զեր հայրապետական օրհնությունը, որպեսզի հեռավոր ափերու վրա միշտ վառ կարենանք պահել հայության բոցը, քրիստոնեական սերը։ Որքան միխիթարական է մեղի, եկեղեցականներուս համար, տեսնել, որ Քրիստոսի եկեղեցին կրազմապատկե իր ճիգերը, իր ժողովները և հավաքությները, որպեսզի իրականանա քրիստոնեական սերը և միշտիթյունը, բոլոր ժողովուրդներուն և բոլոր համայնքներուն միշտ։

Կաղոթենք, Վեհափառ Տեր, որպեսզի Աստված ազակցի Զեր դժվարին, պատախանատու պաշտոնին և լիացնե զԶեղ իր յոթներկյան շնորհքներովը, և մեր ժողովուրդը, Զեր առաջնորդությամբ, կարենա հաղթական ելլել օտարացման վտանգին՝ «սպիտակ շարդին» գեմ, որ, զաղթաշխարհի մեջ, կարծես արմատեն կթունավորե մեր ցեղը, մեր հայությունը։

Օրհնեցե՛ք, Վեհափառ Տեր, այս մանուկները, այս պատանիները, որպեսզի աճին, որպեսզի ուռմանան, որպեսզի կարենան ապագային, իսկապես պատվաբեր անդամները ըլլալ, մեր հայ, նահատակ, բայց միշտ կենդանի ժողովուրդին։

Տ. Արսեն Վարդապետ թերքեցյանը երգում  
է «Ի գերեզման յարուցելոյն» տաղը, «Ներ-  
կանհրուն միտքերը տանելով պահ մը էշ-  
միածնի Տաճարեն ներս» («Հառաջ», 6  
փետրվարի):

Ընդհանուր խանդավառության և շերս  
մթնոլորտում, խոսք է առնում Վենափառ  
Հայրապետը և Հայրական իր պատգամը ուղ-  
ղեցիկ պահակերտության, ասում է.

«Երկրող անզամն է, որ մոտք կցործենք  
այս տաճարեն ներ: Հատակորեն կիթչենք  
Մեր առաջին այցելուրյունը: Հավատացե՛մ,  
որ եռ՝ յի հուզումով և եռ՝ յի խղցը ապրամ-  
ներով է, որ կցանվինք այս պահուս ձեր մեջ:  
Ստույգ գիտենք, թե դուք, սիրելի՝ ուսանող-  
ներ, կղաստիարակվինք մեծ Մխիթարի, մեծ  
Այիշանի շունչավ ու հոգփով, կրոնի ու հայ-  
րենիի շունչով, և կղատրաստվինք իրեւ հայ-  
ժողավարդի հարազատ զալանիներ: Մեր հո-  
գին խորապես հուզվեցավ, երբ ձեր ընկերնե-  
րեն մին իր հրաշալի խոսքը կարդաց, ձեր  
անունով: Մենք այս հանապարհուրդուրյուն-  
ներուն ընթացքին շատ ողջունի խոսքեր լսած  
ենք և կլսենք, բոյորն ալ գեղեցիկ, սրտա-  
ռուշ, հուզիչ, բայց ձեր ուսանող ընկերոջ կար-  
դացած ուղերձը բացառիկ տեղ մը գրավեց  
Մեր հոգվոյն մեջ: Շատ ժիշ անզամ պատա-  
հած է, որ Մենք այդքան գեղեցիկ, իմաստա-  
լից, անկեղծ, չերմ, զունագեղ, հարազատ  
զգացումներով լեցուն խոսք լսած ըլլանե՞ն:  
Մեր հայրենինեն այսքան մղնեններով նեռու,  
օտար ափերու վրա ծեած հայ պատահեներ-  
կարողանան այսպես արտահայտվի, այս-  
պես զգալ և խոսիլ գեղեցկորեն հայերեն,  
հրաշի համազոր բան մըն է, և այդ հրաշքը  
կպարակինք Մեծն Մխիթարին և անոր նույն-  
քան արծանի աշակերտներուն: Կշնորհավո-  
րենք ձեզ: Եվ բոյլ տվիք, դաստիարակ-  
հայրեր, նաև ձեզի, ձեր այս մեծ գործին հա-  
մար, Մենք, Ամենայն Հայոց Կարողիկոս,  
ձեզի շնորհակալուրյուն հայտնենք:

Սիրելի ուսանողներ.

Մենք ձեզի ողջույն կրերենք Մայր Հայ-  
րենիքն և հայոց հավատքի բազմադարյան  
կեղրոն Ս. էջմիածնեն: Դուք մեծ ժողովարդի  
մը զավակներն եք, զարավոր զգացեք ձեզ  
իրեւ հայեր, ամուր պահպանեցեք քրիստո-  
նեական հավատքը ձեր կուրծքերուն տակ:  
լավ սորվեցեք հայոց պատմությունը, հեռո-  
սական անցյալը մեր ազգին, և մի՛ մոռնաք,  
որ հայ ժողովուրդին զավակներն եք և օր մը  
հայաստանցի պիտի ըլլաք: Մենք ձեզի կրե-  
րենք հաւ Աստուծո օրինությունը Ս. էջ-  
միածնեն, որ հավատքի աղբյուր եղած է դա-  
րեւ շարունակ: Մենք կուգենք ձեզ վասահեց-  
նել, որ հայ ժողովուրդի հոգին մեջ հավատ-

ի լոյսը վառ է և երեք պիտի շմարի, հա-  
վիտենական լոյս մըն է, Աստուծո ձեռնով  
վառված: Մարդկային ձեռքը չի կրնար զայն  
մարել կամ տկարացնել: Մենք բվով փառ-  
ժողովուրդ ենք, սահյան հոգիով արի, հա-  
վատքով զարավոր, առաքինաւրյուններով  
օժտված, իմացական փայլուն կարողու-  
թյաններով ժողովուրդ մը, որ դաշեալ ըե-  
րացքին բազմարիկ արձենքներ ստեղծած է,  
իր լուսան նետած է աշխարհի ժաղաքա-  
կրուրյան գանձարանին մեջ: Այս բոլորին  
համար մենք հպարտ պետք է ըլլանք իրեւ  
հայ ժողովուրդի զավակներ, իրեւ Հայա-  
տանեայց Եկեղեցվո քրիստոնյա զավակներ:  
Գիտենք, որ զուտ այս ոգիով կդաստիարակ-  
վիք այստեղ և ահա թե ինչը՞ւ, ամեն անզամ  
ժաղցր զգացումներով, հուզումով, խորունկ  
ապրումներով ձեր տուննեն ներս կմտնենք և  
կրերենք աստվածային օրհնուրյուն ու հաջո-  
ղուրյան մադրանենք բոլորին՝ ամենայն  
հայոց Մայր Արքո Ս. էջմիածնեն: Ապրիք:  
Հաջողուրյուն և ձեզի»:

Հանդիպության վերջավորության, Վեհա-  
փառ Հայրապետը աջահամբուլը խաչեր է  
բաժանում ուսանողներին և վերջում նկար-  
վում է դասախոսական կազմի և ամբողջ ու-  
սանողության հետ:

Այսուհետև, դպրոցի Հյուրասրահում, վարժարանի ծնողների միությունը Հայոց Հայրապետի բարձր պատվին կազմակերպում է թեյասեղան, որն անցնում է ջերմ, հայաշոնչ մթնոլորտում:

Այցելություններ

Փետրվարի 2-ին, երեքշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի իր հարկաբաժնում, ապա առաջնորդարանում, ընդունում է նորից մի շարք պաշտոնական այցելություններ, այդ թվում Փարիզի «Վարդանանց» ասպետների եղբայրակցության՝ անդամների, «Աշխարհ» թերթի խմբագիր Ա. Ալեքսանյանին, «Բյուրակն» թերթի խմբագիր Ն. Գորմիխյանին, «Հառաջ» թերթի խմբագիր Հրանտ-Սամվելին, «Խթան»-ի խմբագիր Լ. Համբարձումյանին, փարիզահայ մշակութային ընկերության անդամների, ինչպես նաև Հովհաննես Պողոսյանի, Խաչատուր Քերաբչյանի և Հայկական բարեգործական ընդհանուր միության ղեկանի:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը ողջունում է ճարտարապետ Էդվարդ Ուրուցյանին:

Ժամը 4-ին, առաջնորդարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ընդունում է

Փարիզի միջազգային ժամուլը, մասնավորաբար պետական հեռուստատեսության կազմը և «Ժուլիալ փառքի»-ն:

Նորին Ս. Օծությունը պատասխանում է ուղիղոյի և հեռուստատեսության խմբագիրների բոլոր հարցերին, ինչպես նաև Ադրիան Արերայի արեկելան ուղղափառ հինգ եկեղեցիների համաժողովին Հայ Եկեղեցու մասնակցության, Հայ Եկեղեցու դավանաբանական դիրքի և այլ Եկեղեցիների հետ բրիստոնեական եղայրության, սիրո կապերի ամրապնդման մասին: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը տեղեկություններ է հաղորդում նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Հայաստանում պատմական հին վանքերի վերանորոգության և պահպանման վերաբերյալ հարցերի շուրջ խոսելով նաև այդ հուշարձանների ճարտարապետական առանձնահատկությունների մասին:

Ավելի ուշ, Վեհափառ Հայրապետը ընդունում է Մտամրովի «Ժամանակ» օրաթերթի թղթակից Վ. Օգինյանին և հետևյալ պատգամն է ուղղում Թուրքիայի բովանդակ հայության:

«Մերով և երախտագիտությամբ կհիշենք Մեր այցելությունը Թուրքիա, ուրկե կպահենք անջնջելի տպավորություններ:»

Ս. Էջմիածնի սեղաններուն առաջ, միշտ պիտի մնանք աղոթող Թուրքիա Հայոց Պատրիքության պայծառության և Մեր հավատացյալ զավակներուն երջանկության համար:

Աղօթող ենք նաև ձեր հանրապետության խաղաղ բարգավաճման և բարօրության համար, աշխարհի խաղաղության, ժողովուրդներու եղայրության և պետությանց բարեկամական գործակցության համար:

Թող Աստված իր լուսը և շնորհները սփռե բոլոր ազգերու հոգիներեն ներս, որպեսզի մարդկային աշխարհը այլևս երբեք չտեսնե պատերազմի կրակը և այլ ողբերգություններ, որպեսզի մարդիկ ու ժողովուրդներ նային դեպի առաջ և ապրին իրեն եղայրներ ու գործակիցներ այս արևին տակ, որ բոլորին կլանք կպարգևե հավասարապես և միևնույն Աստվծո օրհնության ներքե, որ կրաշխվի բոլորին հավասարապես:

Աստվածակառուց Ս. Էջմիածնեն և Մեր պատենք բյուր օրհնություն մեր հավատացյալ ժողովուրդին»:

Փետրվարի 3-ին, շորենքարքի, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով, այցելում է Ֆրանսիայում սովետական դեսպան Ս. Վինոգրարովին: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պր.

դեսպանի միջև տեղի է ունենում մտերմական գրուց, չերմ մթնոլորտում:

Ժամը 11-ին, Նորին Ս. Օծությունը, ընկերակցությամբ Տ. Սերովի արքեպիսկոպոսի և շքախմբի անդամների, փարիզահայության և ազգային-եկեղեցական մարմինների և ֆրանսահայության հին մարտիկների ներկայացուցիչների, մի շքեղ ծաղկեպակ է դնում էտուալի հրապարակում ֆրանսիացի Անժանոթ զինվորի հուշարձանին հետևյալ մակագրությամբ. «Վազգեն Ա. Մայրագույն Պատրիարք և Կարողիկոս Ամենայն Հայոց, հանուն Հայ Եկեղեցվո և հայ ժողովրդի»:

Ունուհետեւ, Վեհափառ Հայրապետը և շքախմբի անդամները ստորագրում են պատվո մատյանում:

Վեհափառ Հայրապետի այցելությունը Ունիսի Դպրոցատեր տիկնանց վարժարանին

Փետրվարի 3-ին, շորենքարքի, ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Ռենսի Դպրոցատեր տիկնանց վարժարանը, ընկերակցությամբ Տ. Սերովի արքեպիսկոպոսի, շքախմբի անդամների, Տ. Գյուտ, Տ. Արիս վարդապետների, Տ. Լեռն, Տ. Վազգեն, Տ. Տարեն հայրերի, Ե. Հյուսիսյանի, Ս. Քարյանի, Ս. Քյուրքյանի, Կ. Օհանյանի, Ա. Մառույանի և ուրիշների:

Վարժարանի գլխավոր մուտքի մոտ, Վեհափառ Հայրապետը ջերմորեն դիմավորվում է տեօրենուին օրիորդ Գարագաշյանի, ուսուցչական կազմի, խնամակալության անդամների, ծնողների և աշակերտության կողմից և առաջնորդվում սրահ:

Աշակերտուհիները իրենց գեղեցիկ համազգեստի մեջ, ձեռքներին կարմիր մեխակներ, հուզումով և երկուղածությամբ մոտենում էին աշահճամբուրի՝ ստանալու նորին Ս. Օծության օրհնությունները: Վեհափառ Հայրապետը, իր օրհնության հետ, յուրաքանչյուրին բաժանում է մեկական խաչ, որպես հիշատակ Ս. Էջմիածնից: Աշակերտուհիները ապրում երգում են հայրապետական մաղթերգության պատմությունը Արտասանվում է «Բարի եկար, Վեհափառ» ձոնը:

Վեհափառ Հայրապետը այնուհետև սեղակից է լինում աշակերտության: Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Աշակերտները գեղեցիկ և մաքուր հայերնով երգում են, արտասանում, հոգեկան մեծ հրճվանք պատճառելով Հայոց Հայրապետի սրտին: Տեսչություն օրիորդ Գարագաշյանը ուղերձի մեջ ողջունում է Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունն ու այցելությունը կրթական այս հարկից ներս:

Օրիորդ Աղավնի Փիրֆիրյանը ընթերցում է խնամակալության հետևյալ սեղեկագիրը. «Վեհափառ Տեր, սրբազն Հայրեր և Հարգելի Հյուրեր».

Այսօր տոն է. մեր վարժարաննեն ներս: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որոնք Հայրական հոգածությունը վայելած ենք ու կվայելենք շարունակ, իր օրհնաբեր ներկայությամբ մեր կրթական հարկեն ներս, խնդությամբ և երջանկությամբ կլեցնե մեր հոգիները: Արդարեւ, բոլորս ալ կզգանք, որ մեր Վեհափառ Կաթողիկոսը մեզի կրերե ոչ միայն Ս. Էջմիածնի շունչն ու ոգին, այլև կենսատու ճառագայթ մը մեր վերածնող հայրենիքն, որով կապրինք, կոգերպինք և կներշնչենք այդ ոգին մեր սանութիներուն:

Զեր ներկայությունը, Վեհափառ Տեր, մեծ քաջալերանք մը և գնահատանք մըն է հաստատության մը հանդեպ, որոն գործունեության մարզերն են դաստիարակությունն ու ուսումը: Այս կրթական հարկը՝ Դպրոցամերը, որ բեղմանավոր անցյալի մը պատմությունը ունի, հիմնված է 1879-ին, նպատակ ունենալով վարժուհիներ պատրաստել թրքահայ գավառի հայ վարժարաններուն համար: Իր այդ, մեծ ծառայություն մատոցած է: Դպրոցամերը, իր պատմության 85-ամյա գործունեության ընթացքին, կարեոր նպաստ մը բերած է հայ իգական սեռի դաստիարակության նվիրական գործին Պոլիս թե արտասահման և ուշագրավ տեղ մը ունի, անկասկած, մեր կրթական տարեգործությանց մեջ:

Իր շրջանավարտները, ըլլան անոնք մայրեր, ուսուցչութիներ և կամ ազգային կազմակերպություններ ներս աշխատողներ, աշքառու տեղ մը գրաված են:

Ներկայիս, համեմատաբար ավելի դժվարին պայմաններու մեջ, ազգապահպանման տեսակետով, 15 տարիների ի վեր, վարժարանը կողոծե ֆրանսական դպրոցներու պետական ծրագրով: Մասնավոր խնամքով կավանդվի հայերենը իր բոլոր ճյուղերով:

Հավակնությունը շունիք երեք ըսելու, թե անթերի եղած է մեր գործունեությունը, սակայն կրնանք ըսել, թե կարելի բոլոր միջոցներով միշտ ձգտած ենք հավատարիմ մնալ մեր կողումին և հետևի մեր նախորդներուն գծած ուղին:

Թազմաթիվ դժվարություններ և խոշունուներ դիմագրաված է խնամակալությունը և այսօր, հավատքով և հոգսով գոտեպնդված, շնորհիվ Զերդ Վեհափառության բարձր հովանավորության և կաթողիկոսական պատվիրակ գերազնորհ Տ. Սերովիք արքափակուպոսի Հայրական թանկագին օժանդակության ու մեր ազնիվ ազգայիններու

բարյացակամ աշակցության, Դպրոցամերը պիտի մնա Հավատարիմ իր առաքելության՝ շարունակելու համար իր լուսավոր ուղին:

Ծնորհակալ ենք, Վեհափառ Տեր, շնորհակալ ենք, սրբազն հայրեր և սիրելի Հյուրեր, որ բարեհաճեցար պատվել մեր կրթական հարկը, քաջալերել մեզ և սանութիները:

Ենթահետև, ուսուցչական կազմի և աշակերտության ուղղակի խրախուսիչ ճառով հանդես է գալիս «Էջմիածին» ամսագրի խմբագրի Արքուն Հայրաբարյան:

Սեղանի վերջավորության աշակերտութիներին գեղեցիկ և բոլվանդակալից խրախական է խոսում Վեհափառ Հայրապետը, հորդորելով լինել տիպար, առաքինի հայ մայրեր՝ մարմնացումը հայ կնոջ ընտանեկան և հայրենասիրական առաքինությունների և ազգային բարքերի, գառնալու համար մեր օրերի «Տիկնայք փափկասունք» Հայոց աշխարհի և ազգի:

Ընդունելությունը վերջանում է խմբովին երգած Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիշ»-ով:

Երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերազնորհ Տ. Սերովիք արքեպիսկոպոսի, Ն. Ֆրենկլյանի, Ս. Քարյանի և գավազանակիր Տ. Արսեն վարդապետի, քաղաքավարական այցելություն է տալիս, ֆրանսիական արտաքին գործոց մինիստրության շենքում, պետական քարտուղար Հարիր Լոնկին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական քարտուղարի միշկ տեղի է ունենում զերմ զրոյց, մաերիմ մթնողորտում:

Երեկոյան ժամը 6-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Փարիզի հայկական ուսմանց կենտրոնի անդամների, որոնք նորին Ս. Օծության խրախուսիչ տեղեկություններ են հաղորդում իրենց գործունեության մասին, արժանանալով Հայոց Հայրապետի քաջալերանքին և օրհնության:

Վեհափառ Հայրապետը Փարիզի ուսանողական ուստանի հայկական տան մեջ

Փետրվարի 3-ին, շորենշաբթի, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Փարիզի հայ համալսարանական ուսանողների Մարի նուպար ուստանը, ընկերակցությամբ Տ. Սերովիք արքեպիսկոպոսի և քահանայի անդամների:

Նորին Ս. Օծությունը, հունվարի 30-ին, երբ ժամանել էր Փարիզի օդանավակայանը, ընդունել էր իրեն դիմավորելու փութացած հայ

սանողության հրավերը՝ այցելելու իրենց  
ունը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի  
ատմական և շնորհաբեր այս այցելության  
ոիթով, հայ ուսանողական տուն էին հրա-  
փել Համալսարանական ոստանի ընդհա-  
ուր տնօրին պր. Կարրիքը, վարչական մար-  
ինների և մյուս տաղավարների ներկայա-  
ւոցիչներ, կաթոլիկ հայոց առաջնորդ գերա-  
պատիվ Տ. Ամառանի արքեպիսկոպոսը,  
Եփրարյան հայեց, Հայկական բարեգոր-  
ատական ընդհանուր միության պատասխանա-  
ռուր ներկայացոցիչներ, ֆրանսահայ կազ-  
ակերպություններ, ուսանողական տան բո-  
լոր ուսանողները և մյուս տաղավարներում  
պանզող բոլոր հայ ուսանողութինները:

Պրոֆ. Ն. Արքիարյանը նախ ֆրանսական  
լեզվով ողջունում է Ամենայն Հայոց Վեհա-  
փառ Հայրապետի պատմական այցելությու-  
նը ուսանողական տուն, խոսում է Հայաս-  
տանյայց Առաքելական Եկեղեցու մասին և  
Հյուրերին ներկայացնում է Ամենայն Հայոց  
Վեհափառ Հայրապետին: Այնուհետև, հար-  
գելի պրոֆեսորը տեղեկություններ է տալիս  
Հայոց Հայրապետին Համալսարանական  
ուստանի ու մասնավորապես հայ ուսանողա-  
կան տան մասին: Պրոֆ. Ն. Արքիարյանը  
պատման Հայոց Հայրապետին է ներկայացնում  
նաև մյուս ուստանների անօրեններին և պրո-  
ֆեսորներին: Հանուն հայ ուսանողության,  
գեղեցիկ մի ուղերձով շնորհակալություն է  
հայտնվում Ամենայն Հայոց Հայրապետին,  
իր ընծայած բարձր շնորհի համար: Ապա,  
ընդհանուր իսկանդավառության մեջ, խոսք է  
տանում նորին Ս. Օծուրյունը:

«Մենք սիրով և խոր հոգումով Մեր օրի-  
նուրյունը կրերենք նախ Պողոս Խոպարի հի-  
շատակին, այս ուսանողական ուստանին,  
անոր ղեկավարներուն, անօրենին և ուսանո-  
ղության, որոնք, իրենց մտավոր աշխատան-  
իք տարիներուն, այս հարկին տակ կգտնեն  
ամեն դյուռություն, հարմարություն, և կիսա-  
նին իրենց նպատակներուն կենսագործման: Այս առիրով, Մենք Մեր հարգալից ողջույնը  
կուգինք բերել նաև այն բարձր մտավորա-  
կաններուն, որոնք այսուղի կգտնվին մեր  
շուրջ, թե անունները չենք գիտեր: (Հանեցեմ Մեր խոսքը ֆրանսերենի բարգմանել ուրեմն): Մեր հարգանքը և Մեր ողջույնը ֆրանսացի  
այս մտավորականներուն: Անոնց ներկայու-  
թյունը այսուղի կապացուցանք անգամ մը  
ևս, որ ֆրանսացի մտավորականներ պատ-  
մական մեծ առաքելությունը կշարունակին,  
ինչ սերունդներեն եկած, ֆրանսացի և հայ  
ժողովուրդներու միջև սիրո կապերը ամ-  
րապնդելով»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը տեղե-  
կություններ և տպավորություններ է հայտ-  
նում Ազգիս-Արեբայի ժողովի մասին և ապա  
շարունակում:

«Կուգելինք հանի մը խոսք ևս ավելցնել  
հատկապես մեր Երիտասարդներուն, մեր ու-  
սանուններուն համար:

Մենք գիտենք, թե Ամենայն Հայոց Կարո-  
ղիկոսն բոլոր ոչ միայն օրինություն կապա-  
սեն, այլ նաև երեք բաշակերպի խոսքեր և  
հոգորություններ: Եվ Մենք ունինք ըստիկներ այդ  
ուղղարյամբ՝ մեր սիրելի Երիտասարդնե-  
րուն: Անձնապես ուրիշ առիրով ալ կրկնած  
ենք, այսուղի ալ կրսենք, մասնավոր ու-  
րախություն մը կզգանք, երբ մեր նոր սի-  
րունինքն, մեր Երիտասարդներուն առջե  
կցանկինք: Կանուննենք անոնց մեջ ոչ միայն  
մեր ներկան, այլ նաև, և մանավանդ, մեր  
ազգին ապագան, մեր հույսներուն և մեր իդ-  
երուն իրականացնումք: Այս առավոտ, ու-  
րիշ առիրով մը, կրսենք ուրիշ Երիտասարդ-  
ներուն, որոնք եկած էին առաջնորդարան, որ  
այս աշխարհի վրա նայ ըլլալը շատ դժվար  
բան է: Դամոկլյան սուրի պիս զանազան  
հարցեր, դժվարություններ կախված են մեր  
զինուն վրա, տակալին շատ դարեր առաջ,  
այդ շշանեներեն սկսյալ, մինչև մեր օրերը:

Մեր գիտակցության մեջ ուժեղ տեղ մը  
գրաված է այս վիճակը և շենք կրնար ձերտ-  
գասպիլ այդ դամոկլյան սուրեն: Երանց Վե-  
քել կրսե իր հայտենի վեպին մեջ. — «Ժա-  
մանակը եկավ, երբ այս աշխարհի վրա կա-  
րելի չէ այլևս իրեւ հայ ապրիլը: Անշուտ,  
բարեբախտարար այդ ողբերգական վիճակին  
մեջ շենք գտնիլիր այսօր: Հայ ժողովարդը  
վերապեցավ ու վերածնավ: Եվ մնացորդա-  
ցը նայ ժողովուրդին նոր կյանքի ուղի բա-  
ցավ, նախ նոր հայրենիք ստեղծելով, այսօր-  
վան մեր Հայաստանը, իր երկու միիննե  
ավելի ժողովուրդով, ուր մեր եղայրենները և  
հույսը, ձեր արյուննեն՝ արյուն և նոգինն՝  
հոգի, կապրին, կախատին, և իրենց ապա-  
գան կերտեն, ամենայն հայոց ապագան:

Թայց նաև Սփյուտքը, ուր ավելի հան մեկ  
միինն ժողովարդը, ինքն ալ իր ձեռնով, իր  
հնարավորության պայմաններով, կարողա-  
ցավ կյանքի նախապահ մը բանալ, ապա-  
ցոյց, որ բոլոր կանք, ամեն տեղ: Մենք  
եկած ենք, թե իրոք կրնանք խոսի վերա-  
ծնունդի մը մասին նշմարտապես: Այս՝ վե-  
րածնունդ, ո՛ւ երազ է այս, ո՛չ պատրանք և  
ո՛չ ալ շատախոսություն: Կմնա, որ մեր Երի-  
տասարդությունը գիտակցություններուն ունենա  
մեր անցյալ ողբերգություններուն և գիտակ-  
ցությունը մեր ներկա վերածնունդին, և իր  
հայացքը սկսեն այն սեպուն հարցերուն վրա,

որոնք մեր ժողովուրդի կյանքի ճանապարհը պիտի հաստատ պահեն, և մեզ պիտի առաջնարդն ուղիղ գծով դեպի մեր հայկական ապացան:

Անձնապիս Մենք լավատես ենք, և Հայատանեն եկող Ամենայն Հայոց Կարողիկասը, վստահ եղեք, որ չի կրնար լավատես շըլլալ: Եվ կույզենք այդ լավատեսուրյամբ վարակել նաև ձեզ, որովհետև, բնական է ի՞չ մը, որ արտասահմանի պայմաններուն մեջ բազում դժվարություններու հանդիպիք, շփոք տեսնեք կարգ մը հարցեր և հայ կյանքի ուղղությունը կամ հանապարհները երեւն հստակ շըլլան ձեզի համար, և կամ այլևայլ կողմեակի պարագաներ տկարացնեն ձեր մեջ ձեր հայկական գիտակցությունը: Այս բոլոր գիտենք որ կապատահին, սակայն Մենք կմադրենք և կփափագինք, որ երիտասարդները այդ բոլորը գիտնան և կարենան հայրանարել:

Քիչ առաջ ըստենք, որ այս աշխարհի վրա իրեւ հայ ապրիլը դժվար է: Թայց երիտասարդի մը համար դժվարություններու հանդիպիլը նույնիսկ զանկալի է երեւմն, համենայն դեպս կյանքը ավելի հետաքրքրական կըլլա: Թուար բառուն ուժերը պետք կըլլա երեան հանել, կազմակերպել զանենք, որպեսզի հերասական ճիգով մը կարողանան ձեր հանապարհը գտնել, հայոց պատմության գծով և ոգիով:

Խոսվեցավ այստեղ ի՞չ առաջ ֆրանսական մշակույթի բարերար ազիցության մասին: Մենք կիավատանք աղօր: Ընդհանրապիս Մենք մշակույթին կիավատանք: Մենք կկարծենք, որ եթե իսկապիս մարդ ենք, չենք կրնար մշակույթին շնավատալ, որովհետև մարդու գաղափարը առավելապես և էապես բնորոշողը մշակույթին է՝ իր ամենալայն իմաստով, կրոնեն ալ մեջը առնված:

Հայ ժողովուրդը երեք կողմացած չէ մնացած, հակառակ իր շատ դժբախտ պայմաններուն: Իր հոգին միշտ բազած է ուրիշ մշակույթներու և հատկապես ֆրանսական մշակույթին, տակավին հնագույն ժամանակներն միշել մեր օրերը: Թեև և դարուն, նիշտ է, ֆրանսական մշակույթը չկար, բայց կար հելլենական, արևմտյան մշակույթը, և հայերը միշտ հաղորդակից եղած են արևմտյան մշակույթին: Խոկ հետաքային, հայերը միշտ ավելի մոտ եղած են ֆրանսական մշակույթին: Մենք այս չենք բայց անոր համար համար է, որ մենք լավատես ըլլանք դեպի հայոց ապացան:

Պետք չէ երկյուղ կրել, որ մեր հայկական հոգին կրնա առաջադիմիլ, եթե մենք հաղորդակից ըլլանք ֆրանսական կամ ուրիշ օտար

մշակույթներու արժեքներուն: Այդ ճիշտ չէ: Ընդհակառակը, եթե, իրեւ հայ ժողովուրդի զավակներ, դո՛՛ւ, երիտասարդներ, կարենաք ֆրանսական նշանակույթի հարազատ ավերեն ըմպել, ձեր հայկական հոգին ավելի պիտի զորան: Անշուշտ, պայման է, որ ձեր այդ ըմպածքը ըլլա իսկապիս ֆրանսական մշակույթի արժեք, և ոչ թե մակերեսային, ոչ թե մշակույթը կեղծող երեւ վայրեն:

Կարծենք բավական հստակ կրցանք արտահայտել Մեր միտքը: Անգամ մըն ալ կկրկնենք մեր երիտասարդներուն, որ օգաղին այն առիրեն, որ կարվի իրենց այս լուսի կեղրունին մեջ, ամբարելու գիտուրյուն, գրականություն և արվեստ ֆրանսական մեծ մշակույթն, աղով զորացնելու իրենց հայկական ողին, և հետո իրենց ուշաղություններ կեղրունակին այն մշակուրային արժեքներուն վրա, զորս ստեղծած է հայ ժողովուրդը պարագաները և առաջարկությունները նաև ապավելի կիարսացնենք մեր ազգային-մշակուրային զանարան:

Մենք փոքր ժողովուրդ ենք: Եվ այսուհետև մանավանդ, արդի հառաջդիմության, քաղաքակրթության զարգացման հանապարհին վրա, փոքր ժողովուրդներու համար դժվար պիտի ըլլա իրենց իմացական, ողեկան անկախությունը պահելու: Դյուրին գործ չէ: Պետք է Մերցի մեծերու հետ, և ես շմբալ: Այդ մանավանդ մշակույթով պիտի ըլլա, Մեր կարծիքով: Եվ մեր ժողովուրդը, եթե ապացա մը ունի, և պիտի կարենա ունենալ, բոլոր դժվարությունները հաղթահարելով իրեն տեղ մը ապահովելու այս արեին տակ, այդ կարելի պիտի ըլլա իրագործել շնորհիկ իր հին և նոր մշակուրային արժեքներուն:

Ըստած է, թե աշխարհի վրա ժողովուրդներ շկան, այլ կան մշակույթներ: Մենք կիավատանք աղօր, և մենք հայերս մշակույթ մը ունինք, հետեւարար մենք վավերական ազգ ենք: Եվ հետեւարար արդար է, որ մենք լավատես ըլլանք դեպի հայոց ապացան:

Մեր սիրելի ուսանողներուն կմադրենք, որ այս բոլորը իրենց խորհրդածության առակա կարծենք, լարեն իրենց ողեկան-իմացական ուժերը, հայ մնան հոգիով, և լավ պատրաստվին, զինվին, արևմտյան, ֆրանսական



Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ է դնում զորավար Անդրանիկի հուշարձանին

մշակույրի և գիտուրյան բռլոր ազնիվ գենեֆեռով և մոտիկ ապագային այս բռլորը օգտագործեն հայ ժողովուրդի և մեր Մայր Հայքի հանրէի փառքին և վերածնուելին համար»:

**Հայրապետական այց  
զորավար Անդրանիկի շիրմին**

Փետրվարի 4-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Փարիզի հայոց առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունում է Մարսելի հայոց Պրադոյի Մայր եկեղեցու վարչության այցելությունը:

Պատվիրակությունը, որի կազմում էին եկեղեցական վարչության ատենապետ Ենովի Արմենը, ատենապիր Զ. Ալեքսանյանը, գանձապահ Հ. Փափազյանը և խորհրդական

Քեշյանը, եկել էր հանուն Մարսելի հայության բարի գալուստ մաղթելու Ամենայն Հայոց Հայրապետին:

Սորին Ս. Օծովիյան, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և ֆրանսահայության առաջնորդ Տ. Սերովը արքեպիսկոպոսի և Մարսելի հայոց Պրատոյի Մայր եկեղեցու վարչության անդամների միջև տեղի է ունենում զրուց Մարսելի ազգային-եկեղեցական կյանքի շուրջ, որին ներկա է լինում նաև Մարսելի հոգևոր հովիկ Տ. Վազգեն արեգան:

Ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը ընդունում է Լիոնի հոգևոր հովիկ Տ. Դավիթ Վարդապետ Սահակյանին, Վալանսի հոգևոր հովիկ Տ. Տարոն արեղա Ճերենյանին, Փարիզից Տ. Արքի Վարդապետ Շիրվանյանի և Տ.

Առն արեղա Աբելանի առանձին-առանձին այցելությունները:

Կեսօրից հետո ժամը 4-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է Փարիզի Պեր-Լաչեղ գերեզմանատունը՝ զորավար Անդրանիկի շիրմին:

Հակառակ աննպաստ եղանակին, Փարիզի և արվարձանների հայության հոծ բազմությունը, մտավորականությունը, մամուլի ներկայացուցիչները շրջապատել էին ժողովրդական մեծ հերոսի հուշարձանը և սպասում էին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ժամանմանը: Այնտեղ էին նաև Արևմտյան Եվրոպայի հայկական համայնքների, այդ թվում Մարսելի, Միլանոյի, Բրյուսելի, Լոնդոնի հայության ներկայացուցիչները:

Արոշյալ պահին ժամանում է Հայոց Հայրապետը՝ շրջապատված իր շքախմբով, եկեղեցականներով, ազգային-եկեղեցական իշխանությանց ներկայացուցիչներով և մի զեղեցիկ ծաղկեպսակ է դնում քաջ Անդրանիկի շիրմի վրա:

Նորին Ս. Օծության հանդիսադրությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն ազգային հերոսի ովհատվայր դարձած գերեզմանի վրա: Պատմական և անհույսանալի էր պահը, երբ բոլոր ներկաները, միաբերան ու միասիրտ, «Հայր մեր»-ը երգելուց հետո, խոր լոռության մեջ, ունկնդրում էին Հայոց հայրենասեր Հայրապետի հայրենաշունչ դիմանական խոսքը (տպված «էջմիածին» ամսագրի 1965 թ. փետրվար—ապրիլ №-ում), որը մի անգամ ևս բոլորի սրտերում վերակենդանացնում էր անվեհեր և առասպելական ժողովրդական հերոսի պաշտելի և անկրկնելի կերպարը, նրա ծննդյան 100-ամյակի առիթով:

### Հրաժեշտի ընդունելություն

Փետրվարի 4-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 8.30-ին, Փարիզի հայոց ազգային-եկեղեցական իշխանությունը, ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, «Հյուտեսիա» հյուրանոցի ընդարձակ և շքեղ սրահում, կազմակերպում է Հրաժեշտի ընդունելություն, մասնակցությամբ ավելի քան 700 ներկաների:

Հրավիրյալների թվում էր սովետական միության դեսպան Սերգեյ Վինոգրադովը, դեսպանատան աշխատակիցներովի:

Ընդունելության ներկա էին գերապատիվ Տ. Ամատունի արքեպիսկոպոսը, Մինիստր հայրեց, հայ մտավորականության և ֆրանսահայ ամբողջ մամուլի ներկայացուցիչներ, թղթակիցներ:

Հրավիրյալների թվում էին միլանահայ պատվիրակությունը, որի կազմում էին ծ. Հյուսիսյանը և դուստր Մարի Հյուսիսյանը, Ստեփան Մրապյանը, Արամայիս Մրապյանը, Բրյուսելից՝ Ա. Մարտիրոսյանը, Լոնդոնից՝ Ս. Քյուրենյանը և «Արեգակ» թերթի արտօնատեր Հայկ Գալստյանը (որը եկել էր Փարիզ շրաբթ օր՝ Լոնդոն առաջնորդելու Ամենայն Հայոց Հայրապետին), Մարտիրոսյանը հայոց Մայր Եկեղեցու պատվիրակությունը և Թերություն «Նահիրի» շաբաթաթերթի խմբագիր Ա. Մառուկյանը և ուրիշներ:

«Փարիզի հայությունը երբեք չէր ունեցած ուժին հոգեկան ապրումը հայրենասիրական և ազգային զգացումներու խանդավառությամբ, ինչպես ունեցավ «Հյուտեսիա»-ի սրահներուն մեջ՝ վեհափառին ի պատիվ տրված 4 փետրվարի ճաշկերութիւն երեկոյին:

Կարենի է ըսել, որ գաղութը ամրողությամբ, իր բոլոր հսանքներով, խավերով ներկա էր հավաքույթին: Կարենի է ապահովար ավելցնել նաև, որ բոլորը անհույս գոհունակությամբ և հրձվանքով մեկնեցան, հաղորդակից դառնալե հետո, գեթ քանի մը ժամ, հայկականության զորեղ և կազդուրիչ զգացումին, որ կիսուի բոլոր հայրերու սրտին, եթե նույնիսկ շարտահայտվիր ամեն անգամ և ամեն տեղ» («Բյուրակն», 14 փետրվարի):

Հրաժեշտի ընդունելությունը շնորհալիորեն ղեկավարում է Փարիզի եկեղեցական վարչության նախագահ Սերգակ Քայրյանը, որը հանդիսության իր բացման խոսքում հայտնում է, թե «հոգեկան անհույս հրձվանքով է, որ Ֆրանսայի հայությունը երրորդ անգամ ըլլալով կողջունե Ամենայն Հայոց Հայրապետին երջանկաբեր այցելությունը, որ կազդուրիչ նոր ոդի կներշնչե գաղութին: Նորին Ս. Օծությունը խորհրդանիշն է Հայաստանյաց Առաքելական եկեղեցվու միասնականության, հայ ժողովուրդին միության և մեր վերածնած Մայր Հայրենիքին»:

Հանուն ֆրանսահայ գաղութի, ողջերթ մաղթելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Սերգակ Քայրյանը մաղթում է, որ նորին Ս. Օծությունը «շատ և շուտ գա Ֆրանսա և իր իմաստուն հայրապետական խոսքերով և հմայքով ցուց տա այն լուսավոր ճամբան, որ կտանի դեպի բարին, գեղեցիկը և ճշմարիտը»:

Ապա խոսք է տրվում կաթոլիկ հայոց առաջնորդ գերապայծառ Կարապետ արքեպիսկոպոս Ամատունուն, որը թերևս իր ամենն տպավորիչ և գեղեցիկ ճառերեն մեկը խոսեցավ ազգային, հայրենասիրական բուռն զգացումներով զեղուն» («Բյուրակն», 14 փետրվարի):



Վեհափառ Հայրապետը Փարիզում, իր շքախմբով, Անծանոթ պինվորի հուշարձանի առաջ:

Ամառունի սրբազանը, սրտագինս ողջունելով Ամենայն Հայոց Հայրապետի ներկայությունը, ասում է. «Ամեն անգամ, որ Ս. էջմիածնի դարավոր Աթոռին Գահակալ նորին Սրբությունը՝ Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Փարիզին կանցնի, ուրախության և հույսի ակնկալություններու ալիքը կտարածվի այս գաղութին վրա»:

Ան մեզի կրերե Հայաստանի ջերմ շոնչին հետ նաև օրհնությունը Ս. Լուսավորչի Աթոռին, որուն հետ սերտորեն կապված է ամեն հայու սիրտը»:

Ամառունի սրբազանը, Ս. Լուսավորչի Աթոռի կատարած գերը վեր հանելուց հետո հայ ժողովրդի գոյության պահպանման սրբազան գործում, Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձի մեջ ողջունում է այդ Աթոռի արժանավորագույն գահականներից մեկին, որն իր խոսքով, գործով և քրիստոնեական ոգով մեծ գեր է կատարում հայ ժողովրդի աղքային-եկեղեցական միասնականությունը ապահովելու բնագավառում։

Մարսելի հայոց Պրադոյի Մայր եկեղեցու վարչության նախագահ Ենովի Արմենը, հանուն Մարսելի բովանդակ հայության, ջերմորեն ողջունում է Ամենայն Հայոց Վեհա-

փառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը, անխախտ հավատարմություն, որդիական խորունկ հարգանք և սեր է հայտնում Մայր Աթոռ Ս. էջմիածնին և Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետին, ներկաների խանդավառ ծափերի մեջ հայտարարելով, որ Մարսելի հայոց Պրադոյի Մայր եկեղեցու վարչությունը Վեհափառի տրամադրության տակ է դնում երկու միլիոն հին ֆրանկի մի գումար։

Այսուհետեւ խոսք է առնում «էջմիածնին» ամսագրի խմբագրի և Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամ Արքուն Հատիւանը, որն իր ելույթի սկզբում ընդհանուր գծերով ներկայացնում է անցյալում հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ Ս. էջմիածնի կատարած գերը և ապա կանգ է առնում մասնավորաբար մեր այսօրվա իրականության մեջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ղեկավարության ներքո Մայր Աթոռ Ս. էջմիածնին և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կատարած բացառիկ և կարևոր առաքելության և պատմական դերի վրա, ընդգծելով, որ հայ ժողովրդի միության օղակը Ս. էջմիածնին է, որը Միջուրքի և Մայր Հայունիքի փոխհարաբերությունների մեջ կոչված է վճռական հայրենասիրական, աղ-



Հրամեցտի ընդունելություն Փարիզում (Վեհափառ Հայրապետի աջ կողմում՝ Սերովի արքեպիսկոպոս, ծախ կողմում՝ սովետական դեսպան Ս. Վինոգրադով):

գային դեր կատարելու, և որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գործունեության մեջ և նրա սրբազն շրթներով խոսում է ինքը՝ Հայոց պատմության ոգին, դարերի ծանրությամբ և հազարամյակների խորհրդով:

Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և ֆրանսահայոց առաջնորդ Տ. Սերովի արքեպիսկոպոս Մանուկյանը, հանուն Ֆրանսիայի հայության, ողջունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնարեր այցելությունը: Սրբազնը «Ընտրված և գեղեցիկ բառերով թվեց բարեմասնությունները Վեհափառ Հայրապետին, Անոր յուրաքանչյուր այցելության ստեղծած խանդավառությունը ժողովրդին մեջ և Անոր կատարած մեծ գործը, իր գահակալության առաջին օրեն մինչև այսօր: Որևէ կասկած չկա, որ Վեհափառ Հայրապետը կհաջողի իր ծրագրներու գործադրության մեջ, որպեսզի Մայր Աթոռը մնա միշտ շեն ու պայծառ, շարունակելով իր նախախնամական դերը նաև այսօր, իր հմայքի և խորհուրդի շուրջ համախմբելով համայն հայությունը» («Բյուրակն», 14 փետրվարի):

Հանդիսության ընթացքում, ճառերի և ելութների արանքում, գործադրության է

դրվում գեղարվեստական մի հայտագիր, Փարիզահայ արվեստասեր կատարողների շնորհալի մասնակցությամբ:

Միայն Աստղիկ Քյոսեյանն «իր վարժ և գեղեցիկ ձայնով» երգում է Կոմիտասի «Միւրանի ծառուր» Վեհափառ Հայրապետի զավագանակիր Տ. Արսեն Վարդապետ Թերերյանը, որացափիկ ձայնով մը օժտված, խոր հուզում պատճառեց իր երկու երգով՝ «Հայաստան» և մանավանդ «ի գերեզման յարուցելոյն», որ այնքան տպավորեց ներկաները:

Միայն Իրիս Բյուլբյուլյանը, «ծանոթ և սիրված երգչուհի», ապրումով երգում է Հարո Ստեփանյանի «Երեկոյան ծաղկուտ սարեր» երգը:

Սարգիս Պողոսյանը ապրումով և արվեստով արտասանում է երկու քառյակներ՝ «Սալլու շինար էջմիածին»-ը և մի կտոր Սայաթ-Նովայից:

Երգչախմբի ղեկավար Ա. Ճիզմենյանը վեհությունում է «Տէ՛ր, կեցո՛ զու զհայս» ազգային մաղթերքը:

Հրամեցտի սեղանի վերջին խոսում և իր պատգամն է տալիս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի՝ ժողովուրդ».

Ահավասիկ երրորդ անգամն է, որ կգտնըլինք ձեր մեջ, նույն սրահին մեջ: Եվ կցունենք զձեզ նոյնշխան խանդավառ, նոյնժխան սիրով ու հարգաճեղով լեցուն դեպի Մայր Արքոր՝ Ս. էջմիածին:

Դիտելով ձեր բարի ու պայծառ դեմքերը, կարգալով ձեր աշխերուն մեջ ձեր ամբողջ հոգին, լսելով ձեր խաղց խոսքերը և հաստատելով մանափառ նաև ձեր աշխատանքը, ձեր գործունեությունը այստեղ, այս երկրին մեջ եկեղեցական, մշակութային, ազգային-հայրենասիրական գծով, այս բոլորը հաստատեավ, իրեւ Հայոց Հայրապետ Մեր սիրության կեցվածքի նորունկ գոհունակությամբ և միխրառությամբ: Այս բոլորը ցույց կուտան. որ այստեղ մեր ժողովուրդը կենդանի է և կապրի հայ կյանքը իր բոլոր երեսներով, այնքան գրեթե, ինչքան հնարավար է ձեր պանդրիստի կյանքի պայմաններուն մեջ: Այս բոլորին համար Մենք պարուն կզգանք գոհունակության և երախտագիտության խոսք ուղղել նաև այս մեծ երկրին, այս փառավոր երկրին, ասպետական և հյուրընկալ Ֆրանսիային, որ իր գրերը լայն բացավ հայ տարագիրներուն առջե, համաշխարհային պատերազմնեն հետո: Մեծ եղեննեն վերջ, հազար-հազարեներ ապաստան գտան այստեղ և կարողացան ապրիլ ազատ, բարգավաճ, բարօր և խաղաղ կյանք մը: Անզամ մը ևս Մեր խորունկ երախտագիտությունը կիայտնենք հանուն Հայաստանյայց նկեղեցին և Մայր Արքու էջմիածին՝ ասպետական Ֆրանսիային և ֆրանսացի մեծ ժողովուրդին:

Կուգեինք նաև մասնավոր գրեստակություն հայտնել, որ մեր սեղանին շուրջ կցունվին հարգարժան և բարձրաստիճան հյուրեր: Նախ կուգեինք գոհունակությամբ հիշել ներկայությունը այստեղ մեր հոգենոր եղբարք՝ գերապատիկ Ամառունի Մրգազանին, որուն խոսքեր այնքան հոգեցին մեր սրտերը: Մեր գոհունակությունը Սովետական Միուրյան դեսպան նորին Գերազանցություն Ս. Վիճուագրին, որ բարեհանեցավ իր շքախմբով մեր կողմին ըլլալ այս հայկական ուրախ սեղանին շուրջ: Մեր նույնքան շերմ գոհունակությունը այն ֆրանսացի մտավորականներուն, որոնք մեր սեղանին շուրջ կցունվին և որոնց ներկայացուցիչը կնկատենք պրոֆ. Ֆեղերիկ Ֆեղին, գիտնական մեծ ֆրանսացի մը, որ նոյնքան մեծ հայ մը դարձավ:

Միրելիներ, Մենք բոլորին վրա նշանակած ունենինք բազմարիկ կետեր, բայց կխորհինք, քեզ ժամանակը կարեն է և պետք է բարգական կրնառուներ ընել: Կուգեինք կեղունացնել Մեր մտածումը այն իրադարձությունը կամ ապագայի կամ ապագայի վրա:

Վրա, որ մենք, իրեւ Եկեղեցի և իրեւ ժողովուրդ, այս տարի կցունվինք հոգեկան բացանիկ վիճակի մը մեջ, այն պահուն, երբ կանգնած ենք մեր բյուրավար հանատակեներուն, մտու երկու միլիոն համատակեներուն հիշատակին առջե: Այս ամրող տարկան ընթացքին, մենք պիտի սպանք սեր զնիւթիւր, պիտի աղքարենք անոնց հոգիներուն հավիտեական խաղաղության համար և պիտի գարացնենք մեր սրտերուն մեջ անոնց ուխտը. և այդ ուխտը մեր սրտերուն մեջ ամուս պահած, պիտի դիմենք դեպի մեր ավելի պայծառ ապագան:

Ամեն տեղ հայ ժողովուրդը այս պահուս ոգեշնչված է այս մտածումներով և այս զգացումներով:

Դուզեինք ձեզի վկայել մանափառ մեր հայրենի ժողովուրդին նոյն մտածումներուն, նոյն ապրումներուն մասին: Վատահ եղեք, Մեր բառերը տկար պիտի ըլլան պատկերելու համար այն հոգեկան վիճակը, որ հետագիտությունը կրորբուի հայաստանցիներու էության մեջ: Մեծով և պատիկով, պարզ գյուղացինեն մինչեւ ամենաբարձր մտավորացականը, այսօր նոյն զգացումներով կապրին:

Եվ մեր արվեստի մարդիկ՝ բանաստեղծներ, հանդակագործներ, նկարիչներ, երաժիշտներ, իրենց գործերով պիտի արտահայտեն իրենց այս ապրումները, իսկ գիտեականները, իրենց հերքին, հատուններ կպատրաստեն, որնենցմբ ումանք արդին սկսած են լույս տեսնել, նկրված նոյն ողբերգության, որուն հիմնամյակը մենք որոշած ենք հիշատակել:

Դժմն արտասահմանի մեջ անարդարություն կրլա հայաստանցի հայերու նկատմամբ, կարծիք գոյանալով միամտուրեն, քեզ այստեղ հայկական ազգային զգացումը տկարացած է կամ կտկարանա և այլն: Այդ նշմարտապես ցավալի անարդարություն է:

Միրելի՝ ժողովուրդ, չի կրնար ըլլալ, որ մարդ երեանի մեջ ապրի, ամեն օր Արաւատը դիտե և լավ հայ ըլլա: Մեր ժողովուրդը, մեր հայաստանցի ժողովուրդը, ձեր հարցառ գույշերն ու եղբայրները այն հայերն են, որոնք երկու միլիոններ ավելի մեկտեղաված հայերներ հողին վրա, կվերաշինեն և մեծ շափով արդեն վերաշինած են մեր ավերված երկիրը, մեր բշվառ ու անսեր Հայաստանը, անցյալի մեր ողբի ու որբի Հայրենիքը: Եվ այսօր այդ երկիրը ապահով է, խաղաղ և ստեղծագործական աշխատանքի փառավոր նախապահի վրա:

Մենք, իրեւ Հայոց Հայրապետ, չենք կրնար այս նշմարտությունը շրսել, ով ինչ կուզե մտածե Մեր մասին: Մենք գուցե

կտարբերին այս տեսակետեն ուրիշ եկեղեցիներէ: Մեր բոլոր մեծ հայրապետականը, որ կուսավարչի Արքոփին վրա նստած են, սիշտ եղած են նաև հայրենասերներ: Դուք եք եղմածին այցելելու առիթը ունենաք, պիտի անսնեք, որ այնտեղ կարողիկուներու շատ գերեզմաններ կան. Խրիմյան Հայրիկ, ներս սես Աշտարակեցի և ուրիշներ, որոնք հայտնի են անշուշտ որպես հայրենասեր և հայրենանվեր հայրապետներ: Այդ բոլոր գերեզմանները զարդարված կմնան պարզ, անձանոր, գյուղացի ժողովուրդին կողմէ բերված ծաղիկներով:

Այս խոսքերը ինքնազովուրյուն մի՛ ճկատեք, սիրելիններ, Կազզեն Կարողիկոսի մասին չէ խոսքը: Ով որ ալ նստի Ամենայն Հայոց Հայրապետության Արքոփին վրա, նույն ապրումները և նույն օգին պիտի ունենաւ:

Մեր անցյալ տառապահենները, մեր անցյալ ահավոր ողբերգությունները մեզի կրելադրեն նիշտ և արդար գնահատել ներկա մեր հայրենի վերածնունդը: Մենք, որ պիտի ոգեկոչենք հարգանքով և երկուուրծությամբ մեր բյուրավոր նախատակները, անշուշտ երբեք պիտի շմռնանք, որ ապրիլյան եղեննի զոհերուն նիշտառակր հավերժացնող գերազույն լուսապակր այսօրվան մեր վերածնած ժաղաքամայր Երևանի լույսերը կկազմեն:

Վերջացնելե առաջ Մեր խոսքը, Մենք կուզենք ոգեկոչել «Մուսա լեռան 40 օրը» վեպին ներուո՞ Գարդիել Բագրատյանը: Այս վեպը կարդացած եֆ անշուշտ, եթե չկարդացողներ կան, պետք է անպայման կարդան: Հայաստանի մեջ հրատարակվեցավ 50 000 օրինակով և մեկ շարարվան ընթացքին սպանեցավ: Գարդիել Բագրատյան գաղութահայ մըն է, ֆրանսումի Ժյուլիետին ամուսինը: Պահ մը գրեթե մոռցած էր իր անցյալը և զինքը իր ազգին կապաղ խորունկ արմատները: Բայց, նակատագրի բերումով, անեկավ իր հայրենիքը: «Մուսա լեռան ժառանգուն օրը» վեպին մեջ Ֆրանց Վերֆել հրաշալի կերպով հոգերանական վերլուծումը կուտա այն պահուն, երբ Գարդիել Բագրատյան ինքնինքը գտավ հայրենի հոգին վրա: Եր մեջ արքնցավ այն, ինչ որ չեցած ըլլալ կրվեր: Ինք դարձավ ճշմարտապես հայ, ոչ միայն սովորական զինվորը իր ժողովուրդին, այլ զեկավարը այդ ամբողջ ներուամրատին: Թող բոլոր հայ երիտասարդները, որոնք օտար ափերու վրա կապրին, իրենց հոգիով գոնե կապվին հայրենի հողին և տեսնեն պայծառ կերպով, որ ինքնէ զավակներն են այս ժողովուրդին, որ պարտականություն մը ունին կատարելու այս ժողովուրդին հանդեպ, և որուն համար կարծ

ապրիլ ու գործել: Եվ բոլ անոնք գտնեն հանապարհ մը, որպեսզի մասնակցին հայրենիքի կյանքին, մասնակցին կերպով մը հայ վերածնունդին և իրենց լուման բերեն հայ ժողովուրդի կյանքի առաջընթացին:

Կուզենք հրավեր մը ուղղել բայուր հայերուն, ի մասնավորի երիտասարդուրյան, որպեսզի մասնավանդ այս տարի, ամեն մեկը պայծառ տեսնե հայոց պապան և իր մտածումներով, իր խոսքով ու գործեալ ինքզինքը դնե ուղիղ հանապարհ մը վրա, դեպի ազգավայր ու հայրենասեր գործ: Այս հանապարհն վրա Մայր Արքոն Ս. էջմիածինը անշուշտ պիտի կասարե իր պարտականուրյունը, նույնիսկ եք հատուկ դժվարություններու հանդիպի արտասահմանի մեջ: Բայց Ս. էջմիածինը երբեք պիտի շիրածարի իր պատմական հոգեւոր ու ազգային առաքելութենեն: Անհնար բան է, որ Ս. էջմիածինը իր այդ առաքելութենեն հրածարի և անհնար բան է, որ հայ ժողովուրդը հաշտվի այսպիսի կացուրյան հեա:

Այս երկրին մեծ փիլիսոփաներն մեկը, Ժան Պոլ Սարտրը, նետայալ խոսքը կրս տեղ մը.— «Ես կիավատամ Աստուծոն, որովհետեւ որոշած եմ իմ գոյուրյունս պահել»: Դատ խորհմաստ և ճշմարիտ խոսք մըն է: Եվ նոյն արամադրությամբ պիտի ըստինք, որ մենք կիավատամ Ս. էջմիածինի առաքելուրյան արտասահմանի մեջ, որովհետեւ որոշած ենք արտասահմանի հայուրյունը կենդանի պահպանել: Անշուշտ, միայն Ս. էջմիածինը իր ուսերուն վրա չի կրնար առնել այդ վիրխարի աշխատանքը, բայց ամենայն համարձակուրյամբ կրսենք, որ Ս. էջմիածինը վեռական մեծ գործ ունի, աշխատանքի բաժին ունի այդ նպատակը իրագործելու համար: Այդ նպատակը պիտի իրագործենք մեր բոլոր բարի զենքերով:

Անկեղծ ուրախուրյամբ պետք է հաստատել, թե Մեր համբուրդուրյուններու ընթացքին կտեսնենք, որ նետզենես արտասահմանի բոլոր հայերը այս ճշմարտությունը կդաշտանի: Մենք կեկատենք բոլոր մեր արտասահմանի հայերը Մեր հարազար զավակներն են ոք չենք նկատեր մեզմե բաժնված և ոչ ալ Մայր Արքո՞ անոնցմե:

Կրածնվինք ձեզմե խորապես գիտ սրտով և անսահման միխրաբուրյամբ: Պիտի տանինք այս բոլոր հիշտառակները և նույներ մեզի հետ և պիտի պատմենք ձեր հայաստանցի եղբայրներուն և բույրերուն, հասկապես մտավորականներուն, որոնք հանախ Մեզի կայցելեն: Մենք կրնանք ձեզի վստահեցնեն, թե չի պատահիր այցելուրյուն մը էջմիածին, հայաստանցին մը այցելուրյունը, որ



«Չ մ ե ռ»

(Ըկարիչ՝ Ալխալյան)

պայմանադրական խոսքերեն անմիջապես հետո, հարց շտրվի Մեզ. «Ո՞նց են ապրում արտասահմանի մեր եղբայրներն ու քոյրերը, ի՞նչ լուրեր ունեք երանցից։ Հայերեն խոս՝ մ են, հայ եկեղեցիները ինչպես են գործում, հայ դպրոցներ կա՞ն, սիրում են հայրենիքը, արդյօք մոռացե՞լ են մեզ, թե իշխում են», և այլն և այլն։

Մենք իրենց լայն կերպով տեղեկություններ կուտանք, երբեմն կշափականցենք նույնիսկ, որպեսզի ուրախացնենք։

Նատ հուզիչ են, շատ հուզիչ այս տեսարանները և այս պատկերները, երբ երիտասարդներ կրլլան Մեր առջև։ Երիտասարդ ուսանողներ կամ ուսուցիչներ իրենց աշակերտներն ենա, այցելության կուզան հանախ էջմիածին։ Կտեսնենք, որ անոնց բռնորդին սրտերը կղղողան հուզումով։ Եվ այս համբորդութենքն Մեր վերադարձին պիտի հարցնեն անոնք, թե ի՞նչ կմտածե մեր արտասահմանի հայությունը ապրիլյան եղենին հիսնամյակին առիրով։ Ճշմարիտ կրսենք ձեզի, անոնք Մեզի ուրիշ հարցումներ պիտի շտան։ Ոչ մեկ հարցում Աղյուս-Աբեբայի ժողովին, ոչ ալ Սնբիլիասի, Մարգիլո խնայիրներուն շուրջ, որոնք, այնտեղեն դիտված, չնշին հարցեր են։

Սիրելի՝ ժողովուրդ, բաժնվելով ձեզմե, Մենք կրողունք Մեր սերը ձեզի և Աստուծությունը Ս. էջմիածնի։ Մնացե՞մ խաղաղ և քարօր, համախմբված ձեր եկեղեցին շուրջ, հավատելով, լավատեսությամբ, միասնությամբ, գործակցությամբ և հայենասիրությամբ։ Եվ կսահ եղեք, որ ժամանակը կուզան և բռնոր աշխատանքները փառնով կպասկվին, ի մխիթարություն համայնշայ ժողովուրդին։

#### Վերջին այցելություններ

Փետրվարի 5-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 10-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Լոնդոնի Հայոց գաղութի վարչության անդամ Հայկ Գալուստյանի, որը մասնավորաբար եկել էր Փարիզ, Նորին Ս. Օծությանը առաջնորդելու լոնդոն, և ավելի ուշ՝ ԺԱՖ-ի վարչության անդամների։

Ժամը 11-ին, Փարիզի Հայոց առաջնորդարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին է այցելում Հյուրաբար Փարիզում գտնվող Անթիլիասի միարան Տ. Արտավազդ նպիլովոս Թրբոյանը։

Նույն տեսակցության ներկա է լինում նաև Արևմտյան Եվրոպայի հայոց հայրապետա-

կան պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովի արքեպիսկոպոս Մանուկյանը:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապեար բարեհաճում է իր շքախմբով պատվել ընտանեկան հարկը Մ. Պետրոսյանցի, օրհնելով նրա սեղանի աղն ու հացը:

Երեկոյան ժամը 5-ին, առաջնորդարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին է այցելում «Երգի Կեսար», Հանրածանթեգիշ Երգի Շառլ Ազնավուրը: Նորին Ս. Օծության և մեծատաղանդ արվեստագետ հայի միջն տեղի է ունենում զերմ, սրտագին պրուց:

Ժամը 6—7, Վեհափառ Հայրապեար ընդունում է այցելությունները՝ Պ. Սարենյանի (Մարսել), Մարսելի հայոց եկեղեցական վարչության և ավելի ուշ՝ տեր և տիկին Ս. և է. Զրբաշյանների, Մարսելից:

Ժամը 8-ին, Վեհափառ Հայրապեար այցելում է Փարիզում Հայկ Աղարեկյանի բնակարանը:

Նորին Ս. Օծության այցելության ուրախ առիթով, Հ. Աղարեկյանը Մայր Աթոռի թանգարանին է նվիրում նկարիչներ Ալիազյանի և Շ. Աղամյանի երկու գործերը:

### Վեհափառ Հայրապետը իրածեց է առնում Փարիզից

Փետրվարի 6-ին, շաբաթ, Փարիզում Վեհափառ Հայրապետի այցելության վերջին օրն է:

Նորին Ս. Օծությունը և՛ հյուրանոցում և՛ առաջնորդարանում զբաղվում է վերջին այցելություններով և կարգադրություններով:

Ժամը 1-ին, «Գրիյոն» հյուրանոցի դահլիճում, տեր և ավելին Արծրուն և էլիքա Զրբաշյանները, Մարսելից, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին կազմակերպում են հրաժեշտի ընդունելություն, որին ներկա են լինում

Տ. Սերովի արքեպիսկոպոսը, Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, Տ. Դյուա, Տ. Արևեն, Տ. Արիս վարդապետները, Տ. Վազգեն, Տ. Լևոն, Տ. Տարոն արեղանները, Երվանդ Հյուսիսյանը և դուստրը Միլանոյից, Ա. Քյուրէնյանը՝ Լոնդոնից, Ա. Քարյանը՝ Փարիզից, Տիկին Լուգան՝ Փարիզի ներքին գործոց նախարարությունից, Նիսի վարչության նախագահ՝ Մուշեղ Ճիշենյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ՝ Մոնակոյից, Մ. Պետրոսյանը և Կ. Զրբաշյանը՝ Փարիզից, «Էջմիածն» ամսագրի խմբագիր Ա. Հատիայանը և ուրիշներ:

Հրաժեշտի սույն ներկայացուցչական ընդունելությունը անցնում է սրտագին միթունուրուում, մերթ տրտում և մերթ ուրախ տրամադրությամբ, երբ ներկաներից համարյա բոլորը խոսք առնելով, նույնիսկ արտապահան և հուզումից խեղդված ձայնով բարի ճանապարհ են մաղթում Հայոց սիրելի Հայրապետին և շքախմբի անդամներին, ափսոսանք հայտնելով, որ նորին Ս. Օծությունը շուտ է մեկնում Փարիզից:

Կերպին խոսողն է Վեհափառ Հայրապետը, որն իր էլ ներքին ապրումը, սրտի ալեկոծությունը, խոհերը փոխանցում է ներկաներին, հուզելով բոլորի սրտերը: Գոհունակության և օրհնության հայրապետական խոսքից հետո, բոլոր ներկաները ազահամբույրով հրաժեշտ են առնում նորին Ս. Օծությունից:

Ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը Փարիզի Օոլիի օդանավակայանից, ֆրանսական «Լարավել» ինքնաթիռով, մեկնում է Լոնդոն իր շքախմբով:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հանդիսավորապես ճանապարհում են, Տ. Սերովի արքեպիսկոպոսի գլխավորությամբ, Փարիզի հայոց եկեղեցական վարչության անդամներ, կազմակերպության ներկայացուցիչներ, Մահմարյան հայրեր, մամուկի ներկայացուցիչներ և ժողովրդի հոծ բազմություն:

